ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մայիսի 7-ից 10-ը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն) գործուղման արդյունքների մասին

1. **ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ**
   Ժաննա Անդրեասյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

   ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն) 2023 թվականի մայիսի 7-ից 10-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Միացյալ Թագավորության կրթության պետքարտուղար Գիլյան Քիգանը

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն կրթության համաշխարհային ֆորումին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Կրթության համաշխարհային ֆորումն այս տարի անցկացվում էր «Ուսուցման մշակույթի զարգացում. ավելի լավ և կայուն կրթություն ձևավորելու նպատակով ուսուցման մշակույթի զարգացում, ճկունություն, և խթանում» խորագրի ներքո, որին մասնակցում են ավելի քան 118 երկրի կրթության ոլորտի ղեկավարներ, ընդհանուր առմամբ՝ շուրջ 1000 պատվիրակ ամբողջ աշխարհից:

Կրթության համաշխարհային ֆորումի շրջանակներում Լոնդոնում հանդիպել եմ «Educational Testing Service» (ETS) ամերիկյան կազմակերպության ներկայացուցիչների հետ:

Ընթացքում քննարկել ենք հանրակրթական դպրոցների կրթական մակարդակների անցումների գնահատման, մասնավորապես՝ Հանրակրթության պետական նոր չափորոշչին համահունչ տարրական դպրոցից միջին, միջինից ավագ և ավարտական քննությունների կազմակերպման ու գնահատման ուղղություններով համագործակցության վերաբերյալ հարցեր:

Քննարկման ընթացքում անդրադարձ է եղել նաև բուհերի ուսանողների գնահատման ուղղությամբ համագործակցության հնարավորությանը, հատկապես ընդունելության, ուսումնառության ընթացքում առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների մասնագիտական զարգացման և ուսումնառության վերջին տարում կարիերայի նախապատրաստման գնահատման ուղղություններով: Միջազգային գործընկերների կողմից ներկայացվել է նաև «PIAAC» համակարգի միջոցով կազմակերպվող մեծահասակների գրագիտության գնահատման համակարգը:

Արդյունավետ էին նաև քննարկումները «Ի՞նչ քայլեր կարող ենք կամ պետք է ձեռնարկենք կրթության ոլորտում առաջնորդություն զարգացնելու համար՝ յուրաքանչյուր մակարդակում: Ղեկավարության ո՞ր տեսակներն են լավագույնս աշխատում» խորագրով պանելային նիստում:

Ֆորումի շրջանակում ներկայացվել են ազգային մակարդակներում հանրակրթության, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտներում հիմնական ձեռքբերումները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել կրթության հիմնական բաղադրիչներին՝ ուսուցման վաղ տարիքից հմտությունների զարգացումը և տեխնոլոգիաների ներդրումը խթանելու նպատակով:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Ֆորումի «Ի՞նչ քայլեր կարող ենք կամ պետք է ձեռնարկենք կրթության ոլորտում առաջնորդություն զարգացնելու համար՝ յուրաքանչյուր մակարդակում. ղեկավարության ո՞ր տեսակներն են լավագույնս աշխատում» խորագրով նիստին հանդես եկա ելույթով:

Եռօրյա ֆորումի ընթացքում հանդիպել եմ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Դպրոցների հարցերով պետնախարար Նիկ Գիբի (Nick Gibb, Minister of State for Schools) և Դպրոցական համակարգի և ուսանողների ֆինանսավորման նախարար Բարոնուհի Բարանի հետ (Baroness Barran, Minister for the School System and Student Finance): Հանդիպմանը մասնակցել են ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վարուժան Ներսեսյանը:

Ներկայացրել եմ ՀՀ կրթական համակարգում մեկնարկած լայնածավալ փոփոխությունները՝ ընդգծելով, որ կրթության բոլոր աստիճաններն ընդգրկող բարեփոխումների շղթայում առավել դինամիկ են հանրակրթության փոփոխությունները, կարևորելով, որ ՀՀ դպրոցներում առաջիկա ուսումնական տարվանից ներդրվելու է Հանրակրթության նոր չափորոշիչը, որը մեծ պատասխանատվություն և հավելյալ ջանքեր է պահանջում: Այս համատեքստում քննարկվել է երկկողմ համագործակցության

հնարավորությունը հանրակրթական դպրոցների ուսուցիչների և տնօրենների մասնագիտական զարգացման, կրթության տեսչության՝ որպես վերահսկող մարմնի գործունեության բարելավման, ինչպես նաև գնահատման նոր մոտեցումների արդյունավետ կիրառման ուղղություններով: Անդրադարձ է եղել նաև արտադպրոցական ծրագրերի զարգացմանը՝ կարևորելով համատեղ նախագծերի իրականացման հնարավորությունները: Այցելել եմ նաև բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, հանդիպել եմ Լոնդոնի համալսարանի, Լոնդոնի արվեստի համալսարանի, Վեստմինստերի քոլեջի ղեկավար կազմի ներկայացուցիչների հետ, ծանոթացել բրիտանական ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերին և ենթակառուցվածքներին: Հանդիպումների ընթացքում քննարկվել են համագործակցության հեռանկարները, անդրադարձ է եղել ակադեմիական քաղաքների ստեղծման և կառավարման, կրթական կլաստերների հիմնադրման գործընթացում կիրառված վարչական լուծումներին վերաբերող հարցերի: Հանդիպումը մասնավորապես հետաքրքիր էր Արվեստի համալսարանի գործունեության բրիտանական փորձով, քանի որ ՀՀ-ում ներկայումս քննարկվում է Ակադեմիական քաղաքի ստեղծման հարցը, որտեղ նախատեսվում է հիմնել նաև արվեստների կլաստեր: Այս համատեքստում կարևորել է արվեստի կրթության արդյունավետ կազմակերպումը՝ ընդգծելով ուսումնական ծրագրերի և ենթակառուցվածքների բարելավման անհրաժեշտությունը:

Վեստմինստերի քոլեջ այցելության ընթացքում ներկայացվել է արվեստի ոլորտի համար տեխնիկական մասնագետների պատրաստման ուսումնական գործընթացը, որը դիտարկվում է արվեստների կրթական կլաստերի շրջանակում: Կողմերը շեշտել են նաև միջբուհական կապերի զարգացման, ինչպես նաև միջին մասնագիտական կրթության աստիճանում համագործակցության անհրաժեշտությունը:

Այցելել եմ նաև Բրիտանական թանգարանում բացված «Շքեղություն և ուժ. Պարսկաստանից Հունաստան» խորագրով ցուցահանդես, որտեղ ներկայացված են բացառիկ ցուցանմուշներ Հայաստանի պատմության թանգարանից և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանից: Միացյալ Թագավորությունում առաջին անգամ ցուցադրվում են Արմավիրից գտնված ոսկյա կրծքազարդը, կավե ցլակերպ ծիսանոթը (Ք.ա. VI-V դդ.), Էրեբունիից հայտնաբերված արծաթյա հեծյալի ծիսանոթը (Ք. ա. VI-IV-դդ.), Արտաշատից գտնված կավե արջակերպ ծիսանոթը (Ք. ա. I դ.): Այցելուների հատուկ խմբի համար կազմակերպված փակ դիտումների ժամանակ հատկապես ուշադրության է արժանացել Հայաստանի պատմության թանգարանից տրամադրված արջակերպ ծիսանոթը, որը մեկ ցուցափեղկում է համադրված Բրիտանական թանգարանում պահվող համաժամանակյա մեկ այլ բարձրարժեք ցուցանմուշի՝ Անահիտ աստվածուհու կիսանդրու հետ: Այս ցուցանմուշներն իսկական բացահայտում են դարձել Բրիտանական թանգարանի մասնագետների համար:

Բրիտանական թանգարանի տնօրեն Հարթվիգ Ֆիշերի հետ հանդիպմանը քննարկվել են հայ-բրիտանական համատեղ ցուցադրությունների կազմակերպման հնարավորություններին առնչվող հարցեր: Անդրադարձ է եղել թանգարանների կառավարման խնդիրներին՝ մասնավորապես կարևորելով ցուցադրությունների արդյունավետ կազմակերպման մոդելների ներդրումն ու զարգացումը, ինչպես նաև միջթանգարանային երկկողմ կապերի ամրապնդումը:

8.ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

5/15/2023

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

15.05.2023 թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ ԿԳՄՍՆ

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՎՈ 436-Ա

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Ժաննա Անդրեասյան՝ ՀՀ ԿԳՄՍ նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն)

5. Գործուղման ժամկետները՝ 2023թ.մայիսի 7-ից-10-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ *ՀՀ պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցներ*

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Արաքսիա Սվաջյան	Անուն, ազգանուն 2	Անուն, ազգանուն 3	Անուն, ազգանուն ...	Ընդամենը (հազ.
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս,					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	0				0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով,(դոլա	228				228
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	88343				88.343
	Օրերի քանակը	3				3
	Ընդամենը (դրամ)	265029				265.029
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) ,(դոլար)	123				123
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	47659				47.659
	Օրերի քանակը	4				4
	Ընդամենը (դրամ)	190635				190.636
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***455.664***				455.664

Ծանոթություն: Նախնական վճարվել է 455664 << դրամ, ենթակա է վճարման 0 << դրամ:

ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղար՝ **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**